


ՀՀ բանկային համակարգի 2007 թ.-ի գործունեության համառոտ վերլուծությունը

ՀՀ բանկային համակարգի գործունեության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջին տարիների ընթացքում ՀՀ բանկային համակարգը դրսևորել է կայուն առաջընթաց, ապահովել է հիմնական ցուցանիշների բարձր և կայուն աճ, և ամենակարևորը, որ հիմնական ցուցանիշների այդպիսի աճ ապահովվել են գրեթե բոլոր բանկերի կողմից, ավելին՝ նույնիսկ որոշ բանկերի մոտ առանձին ցուցանիշների գծով աճը կազմել է 100 %-ից ավելի: Հիմնական ցուցանիշների գծով բարձր աճ է գրանցվել նաև 2007 թ.-ի ընթացքում. այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու տարում աճել են 44.1 %-ով կամ 239.9 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 784.1 մլրդ դրամ, ընդ որում IV եռամսյակում ավելացել են մոտ 97.0 մլրդ դրամով, համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա IV եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվները ավելացել էին 48.1 մլրդ դրամով: Ընդհանուր ակտիվների վերոնշյալ աճը հիմնականում իր արտացոլումն է գտել ֆիզիկական անձանց և տնտեսությանը տրամադրվող վարկերում:

Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 67.9 %-ով կամ 172.7 մլրդ դրամով, իսկ ներդրումները արժեթղթերում՝ 5.0 %-ով կամ 4.6 մլրդ դրամով և տարեվերջին կազմել համապատասխանաբար 427.2 և 95.0 մլրդ դրամ, ընդ որում IV եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել են 15.7 %-ով կամ 58.0 մլրդ դրամով, իսկ ներդրումները արժեթղթերում նվազել 3.7 %-ով կամ 3.6 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ 2006 թ.-ի IV եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 10.9 %-ով կամ 25.1 մլրդ դրամով, ներդրումներն արժեթղթերում՝ 5.9 %-ով կամ 5.1 մլրդ դրամով: 2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 54.5 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 48.8 %-ը կամ 208.4 մլրդ դրամ, և այս ցուցանիշը տարվա ընթացքում աճել է 57.4 %-ով կամ 76.0 մլրդ դրամով, ընդ որում չորրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 10.5 %-ով կամ 19.8 մլրդ դրամով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 5.2 %-ի կամ 6.6 մլրդ դրամի դիմաց:

Տնտեսությանը տրված վարկերի կառուցվածքը 2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը 2007 թ.-ի ընթացքում կազմել է 102.9 % կամ 105.2 մլրդ դրամ, ընդ որում չորրորդ եռամսյակի ընթացքում աճը կազմել է 20.9 % կամ 35.9 մլրդ դրամ, որի նախորդ տարվա համանուն ցուցանիշը գերազանցել է մոտ 3 անգամ կամ 27.0 մլրդ դրամով: Հաշվետու տարվա վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 48.5 %-ը կամ 207.4 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 128.2 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 53.5 մլրդ դրամ: Հաշվետու տարվա ընթացքում սպառողական վարկերի ծավալը աճել է 73.8 %-ով կամ 54.4 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 128 %-ով կամ 30.1 մլրդ դրամով, ընդ որում IV եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 19.3 % կամ 20.7 մլրդ դրամ և 16.4 % կամ 7.5 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ նշենք, որ սպառողական վարկերը կազմել են ընդհանուր վարկային ներդրումների 30.0 %-ը, իսկ հիփոթեքային վարկերը՝ 12.5 %-ը:

Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ակտիվների ամենաբարձր տոկոսային աճ գրանցվել է «Արարատբանկ»-ի մոտ՝ 224.9 %, որը դրամական արտահայտությամբ կազմել է մոտ 19.2 մլրդ դրամ, «Արցախբանկ»-ի մոտ արձանագրվել է ակտիվների նվազում՝ 2.4 %-ի կամ 557.6 մլն դրամի չափով: Սակայն պետք է նշել, որ բացարձակ մեծությամբ ընդհանուր ակտիվների առավելագույն աճ ապահովվել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ի կողմից և այն կազմել է 27,5 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Արդշինինվեստբանկ»-ը՝ 24,7 մլրդ դրամով:

Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալներն ապահովել են Արդշինինվեստբանկը՝ 59.4 մլրդ դրամով, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 55.9 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 51.6 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 41.4 մլրդ դրամով և «Կոնվերս Բանկ»-ը՝ մոտ 30.1 մլրդ դրամով, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջատար դիրքերում են գտնվում «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 32.4 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 25.9 մլրդ դրամով, «Արդշինինվեստբանկ»-ը՝ 25.0 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 17.3, «Յունիբանկ»-ը՝ 17.0 մլրդ դրամով և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 15.8 մլրդ դրամով: Համակարգում հիփոթեքային վարկերի գծով առաջին հնգյակում են՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 17.4 մլրդ դրամով, որը կազմել է համակարգի հիփոթեքային վարկային պորտֆելի 32.5 %-ը, «Յունիբանկ»-ը՝ 9.1 մլրդ դրամով (17.0 %-ը), «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 5.0 մլրդ դրամով (9.26 %-ը), ընդ որում չորրորդ եռամսյակում «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ն ապահովել է նաև հիփոթեքային վարկերի ծավալի ամենամեծ աճը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 2.0 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 2.6 մլրդ դրամ և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 2.4 մլրդ դրամ (4.57 %-ը):

Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 21.5 մլրդ դրամով և «Արարատբանկ»-ը՝ 9.5 մլրդ դրամով:

ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները
2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ




2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 618.0 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 45.7 %-ով կամ 194.0 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում աճել է 14.7 %-ով կամ 79.4 մլրդ դրամով, որը նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ցուցանիշը գերազանցել է 34.2 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների տարեկան կտրվածքով աճը պայմանավորվել է նաև բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ցպահանջ և ժամկետային ավանդների՝ 15.3 % կամ 9.0 մլրդ դրամ և 52.8 % կամ 45.0 մլրդ դրամ համապատասխան ավելացումներով, որոնք տարեվերջին կազմել են համապատասխանաբար 68.1 և 130.4 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 11.0 և 21.1 %-ը: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) ավելացել են 18.3 %-ով կամ 30.6 մլրդ դրամով և տարեվերջում կազմել 198.5 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 32.1 %-ը, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդները նվազել են մոտ 0.3 մլրդ դրամով կամ 0.5 %-ով, իսկ ժամկետային ավանդներն ավելացել են

31.0 մլրդ դրամով կամ 31.2 %-ով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներն ավելացել էին 6.8 %-ով կամ 3.8 մլրդ դրամով, իսկ ժամկետային ավանդները՝ 15.5 %-ով կամ 11.5 մլրդ դրամով:

Միաժամանակ արձանագրենք, որ տարեվերջում ֆիզիկական անձանց համախառն ավանդների (ցպահանջ և ժամկետային) առավելագույն ծավալ գրանցվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ի կողմից՝ 51.7 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշն ապահովել է «Յունիբանկ»-ը՝ 26.6 մլրդ դրամով, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկ»-ը՝ 18.7 մլրդ դրամով, ընդ որում ժամկետային ավանդների գծով ամենամեծ ծավալ ապահովել է «Յունիբանկ»-ը՝ 23.8 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը պատկանում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ին՝ 22.5 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկ»-ին՝ 14.9 մլրդ դրամ:

Չորրորդ եռամսյակի կտրվածքով ցպահանջ պարտավորությունների ամենամեծ աճ գրանցվել է «Արարատբանկ»-ի մոտ՝ 155.9 % կամ 3.6 մլրդ դրամ, իսկ նվազում՝ «ԱրմՍվիսԲանկ»-ի մոտ՝ 35.2 % կամ ցպահանջ պարտավորությունները նվազել են 1.4 մլրդ դրամով: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը «Արդշինինվեստբանկ»-ն է՝ 36.9 մլրդ դրամով, այնուհետև նրան հաջորդում են «Յունիբանկ»-ը՝ 27.6 մլրդ դրամով, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 26.5 մլրդ դրամով, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 19.1 մլրդ դրամով և «Ինեսկորբանկ»-ը՝ 18.3 մլրդ դրամով: Եռամսյակային կտրվածքով վերոնշյալ ցուցանիշի ներգրավման լավագույն արդյունք ապահովել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը, որը բացարձակ մեծությամբ կազմում է 8.1 մլրդ դրամ:

ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ



ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 38.3 %-ով կամ 46.0 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 166.0 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 11.8 %-ով կամ մոտ 17.6 մլրդ դրամով, որը նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համանուն ցուցանիշը գերազանցել է 14.6 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 3.3 %-ով կամ մոտ 1.3 մլրդ դրամով՝ տարեվերջին կազմելով մոտ 38.9 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 23.4 %-ը, ընդ որում հաշվետու տարվա ընթացքում կուտակված շահույթը ավելացել է 35.0 %-ով կամ 10.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 12.6 %-ով կամ 12.3 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 110.7

մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 66.7 %-ը: Միաժամանակ նշենք, որ 2007 թ.-ի ընթացքում կանոնադրական կապիտալը ավելացել է 38.2 %-ով կամ 30.6 մլրդ դրամով:


Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ն է 7.8 մլրդ դրամ գումարով, բանկը 2007 թ.-ի ընթացքում ապահովել է 72.6 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են՝ «Կոնվերս Բանկ»-ը՝ 7.1 մլրդ դրամով (աճը 27.7 %) և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 5.7 մլրդ դրամով (աճը 36.8 %): Հաշվետու տարվա կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 3.3 մլրդ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում կանոնադրական կապիտալի համալրման գծով նշանակալից աճ է ապահովել «Արդշինինվեստբանկ»-ը՝ 8.11 մլրդ դրամով, երկրորդ աճը ապահովել է «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 6.38 մլրդ դրամով, իսկ երրորդը՝ «Անելիք Բանկ»-ը՝ 4.15 մլրդ դրամ, ընդհանուր առմամբ համակարգի ինը բանկեր հաշվետու տարվա ընթացքում համալրել են իրենց կանոնադրական կապիտալը:

2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ըստ ընդհանուր կապիտալի մեծության, առաջին հնգյակը կազմել են «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ը՝ 21.3 մլրդ դրամով, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 20.7 մլրդ դրամով, «Արդշինինվեստբանկ»-ը՝ 18.5 մլրդ դրամով, «Կոնվերս Բանկ»-ը՝ 11.0 մլրդ դրամով և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 10.6 մլրդ դրամով: Հաշվետու տարվա ընթացքում տոկոսային արտահայտությամբ ընդհանուր կապիտալի ամենաբարձր աճ է ապահովել «Հայբիզնեսբանկ»-ը՝ 124.2 %, երկրորդ ցուցանիշը ապահովել է «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 121.8 %, իսկ երրորդը՝ «Պրոմբեյթ Բանկ»-ը՝ 87.8 %:

ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Մլրդ դրամ



ՀՀ բանկային համակարգում հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 21.2 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2006 թ.-ին ստացված մաքուր շահույթի ծավալը գերազանցել է 4.2 մլրդ դրամով կամ 24.4 %-ով, ընդ որում չորրորդ եռամսյակում ապահովվել է 4.4 մլրդ դրամի մաքուր շահույթ: Կարելի է նշել, որ համակարգի բանկերից միայն «Կասկադ Բանկ»-ն է տարին փակել վնասով, որը կազմել է 132.8 մլն դրամ: 2007 թ.-ի ընթացքում ստացված մաքուր շահույթի գծով աննախատեսյ առաջընթաց է արձանագրվել «Արդշինինվեստբանկ»-ի կողմից, տարվա կտրվածքով «Արդշինինվեստբանկ»-ը ապահովել է 4.05 մլրդ դրամի մաքուր շահույթ, որի 2006 թ.-ի նույնատնոն ցուցանիշը գերազանցել է մոտ 2 անգամ: 2007 թ.-ի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտներն աճել են 26.9 %-ով կամ 25.0 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 27.4 %-ով կամ 19.7 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով համապատասխանաբար 117.9 և 91.0 մլրդ դրամ, ընդ որում չորրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր եկամուտների աճը կազմել է 44.1 % կամ 36.1


մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 49.0 % կամ 29.9 մլրդ դրամ: Հարկավոր է նաև արձանագրել, որ հաշվետու տարվա հաշվեկշռային շահույթը 25.4 %-ով կամ 5.4 մլրդ դրամով գերազանցել է 2006 թ.-ի հաշվեկշռային շահույթի մեծությանը: 2007 թ.-ի ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը «Արդշինինվեստբանկ»-ն է՝ համապատասխանաբար 22.3 և 17.3 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես ապահովել է «Արդշինինվեստբանկ»-ը՝ մոտ 5.07 մլրդ դրամ, երկրորդ տեղում է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 12.5, 8.5 և 4.0 մլրդ դրամով և երրորդ տեղում՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը համապատասխանաբար 11.0, 6.8 և 4.2 մլրդ դրամով:

2007 թ.-ի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 12.78 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 2.71 %: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքը եռամսյակի ընթացքում ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 30.99 %, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «Արդշինինվեստբանկ»-ը՝ 4.32 %:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով մանրամասն տեղեկությունները ըստ բանկերի արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները

Մլրդ դրամ



ՀՀ բանկային համակարգի մակրոտնտեսական բնութագրիչները

Հ/Հ	Տնտեսությունում ՀՀ բանկային համակարգի դերը բնութագրող ցուցանիշները	01.01.2006 թ.	01.01.2007 թ.	01.01.2008 թ.
1	Ընդհանուր ակտիվների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	20.2	20.4	25.0
2	Ընդհանուր վարկային ներդրումների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	9.4	9.5	13.6
3	Ընդհանուր կապիտալի հարաբերությունը ՀՆԱ-ին, %	4.2	4.5	5.3
4	Ֆիզիկական անձանց ավանդների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	5.4	5.4	6.3

2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,
դրանց աճը և գրավված տեղը համակարգում

Աղյուսակ 1.

Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
	Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդհան- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում			
				Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ.	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ	Չբաշ. շահույթ
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	104461,2	30,2	1	51617,1	67,0	93835,6	28,6	1	22487,5	117,7	10625,5	47,2	5	2437,6	0,0	7830,0	3293,4
Արդշինհիմնվեստբանկ	93826,1	35,7	2	59420,4	90,8	75280,3	29,7	2	14850,4	50,4	18545,8	67,1	3	15513,6	109,6	1177,5	4054,6
ԱԿԲԱ-Կր. Ազրիկ. Բանկ	80306,5	52,1	3	55872,6	71,6	59047,9	71,1	3	10881,9	59,1	21258,6	16,2	1	14567,2	0,0	4522,3	3147,3
Հայէկոնոմբանկ	50428,8	14,7	6	28488,7	39,6	41949,6	13,2	6	5200,2	-16,2	8479,2	23,2	6	2333,3	0,0	5654,2	1878,3
Յունիբանկ	45601,8	47,2	7	29606,1	100,4	38592,1	41,9	7	23845,4	80,6	7009,7	84,8	8	5599,7	100,0	1135,5	350,6
ՎՏԲ Հայաստան Բանկ	70096,0	53,6	4	41360,9	49,7	49389,9	36,0	4	9417,2	7,5	20706,0	121,8	2	13906,2	84,8	2137,5	757,9
Կոնվերս Բանկ	58748,5	65,3	5	30086,0	136,9	47791,7	84,1	5	7998,5	32,4	10956,8	14,4	4	1296,4	0,0	7063,6	1370,9
Անելիք Բանկ	32119,9	8,5	10	16321,1	14,0	26703,1	7,8	10	5766,0	16,6	5416,7	12,5	11	4800,0	633,4	974,2	747,0
Ինելիքբանկ	35788,2	59,5	8	20899,6	72,6	29000,9	77,8	8	7798,4	52,0	6787,3	10,7	9	2353,2	0,0	2802,3	1106,7
Արցախբանկ	22323,5	-2,4	12	13423,6	1,1	17768,7	-6,1	12	1996,3	19,9	4554,8	15,0	16	2244,4	0,0	1871,6	901,6
Հայբիզնեսբանկ	33163,2	99,7	9	15986,2	169,2	27070,6	94,9	9	4961,1	111,9	6092,6	124,2	10	5000,0	108,3	1011,4	775,0
Առէկսիմբանկ	20841,0	52,7	14	10204,2	34,5	17309,8	65,3	14	6156,7	46,5	3531,3	11,0	19	2497,2	0,0	844,3	349,6
ԲՏԱ Ինվեստբանկ	17881,4	86,9	15	12290,1	103,9	12510,6	98,2	15	650,6	303,3	5370,8	65,0	12	5300,0	55,9	70,8	215,2
Արարատբանկ	27754,5	224,9	11	9265,6	218,1	23144,9	391,6	11	1428,0	658,0	4609,6	20,2	15	3640,0	12,3	546,7	315,8
ԱրմՍվիսԲանկ	21655,4	121,5	13	5168,8	108,1	17744,4	164,3	13	1207,4	1,8	3911,0	27,6	18	3750,0	25,0	330,5	308,1
Պրոմեթեյ Բանկ	13400,2	56,7	16	6063,6	114,6	5238,5	24,5	20	499,1	-42,3	8161,7	87,8	7	7200,0	94,6	909,6	371,3
Սելլաթ Բանկ	11287,4	20,6	19	4002,1	18,1	7367,2	30,2	18	142,4	100,0	3920,2	5,9	17	3522,1	0,0	357,6	329,0
Զարգ. Հայկ.կան Բանկ	13969,7	50,9	17	6400,6	45,7	9264,6	69,5	17	2913,3	54,3	4705,1	24,1	14	4206,6	0,0	66,4	909,6
Կասկադ Բանկ	10979,7	24,7	20	4704,6	55,8	6003,8	45,5	19	787,8	5,1	4975,8	6,4	13	5535,0	0,0	-559,2	-132,8
Հայներարտբանկ	13567,7	20,1	18	3972,6	15,9	10126,7	28,0	16	357,7	33,5	3441,0	1,5	20	2028,4	0,0	189,3	162,2
Բիբլոս Բանկ Հայաստ.	5878,7	5,9	21	2000,3	-24,8	2896,8	14,7	21	1031,8	112,7	2981,9	-1,4	21	2965,6	0,0	0,3	2,4
Ընդամենը	784079,4	44,1		427154,8	67,9	618037,7	45,7		130377,7	52,8	166041,4	38,3		110696,5	38,2	38936,4	21213,7

«Հ բանկային համակարգի 2007 թ.-ի գործունեության արդյունքները քարտերի թողարկման և սպասարկման գծով»


«Հ բանկային համակարգում 2007 թ.-ի ընթացքում քարտային ծառայությունների մատուցման մասով նշանակալից աճ է գրանցվել գրեթե բոլոր ցուցանիշների գծով: Բանկային համակարգում հաշվետու տարվա ընթացքում թողարկվել է 143,288 քարտ, այդ թվում՝ 65,747 ArCa, 63103 Visa և 14,438 Master քարտեր, որը 2006 թ.-ի համեմատ ցուցանիշը գերազանցել է 60.2 %-ով կամ 53,828 քարտով, ընդ որում թողարկված ArCa քարտերը գերազանցվել են 51.8 %-ով կամ 22,427 քարտով, Visa քարտերը՝ 63.7 %-ով կամ 24,552 քարտով և Master քարտերը՝ 90.2 %-ով կամ 6,849 քարտով: Տարեվերջին համակարգում ակտիվ քարտերի (չրջանառության մեջ գտնվող) քանակը կազմել է 270,154 քարտ (աճը 51.8 % կամ 92,197 քարտ), այդ թվում՝ 138,637 ArCa (աճը 53.1 % կամ 48,063 քարտ), 110,418 (աճը 46.0 % կամ 34,773 քարտ) և 21,099 Master քարտեր (աճը 79.7 % կամ 9,361 քարտ):

2007 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի սպասարկման ցանցում գործում է 314 ATM և 1,795 POS տերմինալ, որից 386 POS տերմինալ կանխիկ տրամադրման համար: Պետք է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում գործող POS տերմինալների թիվը ավելացել է 54.9 %-ով կամ 636 POS տերմինալով, իսկ ATM-ի թիվը՝ 86.9 %-ով կամ 146 ATM-ով:

«Հ բանկային համակարգի քարտերով 2007 թ.-ի ընթացքում կատարված ընդհանուր գործարքների ծավալը կազմել է 188.4 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 3,766.7 հազ. գործարք, որի նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները գերազանցել է 78.9 %-ով կամ 83.1 մլրդ դրամով և 51.1 %-ով կամ 1,274.4 հազ. գործարքով: Տեղին է նշել, որ ArCa քարտերով կատարվել է 74.4 մլրդ դրամի 2,072.2 հազ. գործարք, ընդ որում՝ գործարքների ծավալը աճել է 61.8 %-ով կամ 28.4 մլրդ դրամով, իսկ քանակը՝ 44.3 %-ով կամ 436.0 հազ. գործարքով, Visa քարտերով՝ 87.6 մլրդ դրամի (աճը 79.5 % կամ 38.8 մլրդ դրամ) 1,332.4 հազ. գործարք (աճը 48.4 % կամ 434.4 հազ. գործարք), իսկ Master քարտերով՝ 26.4 մլրդ դրամի (աճը 150.9 % կամ 15.9 մլրդ դրամ) 362.1 հազ. գործարք (աճը 129.2 % կամ 204.1 հազ. գործարք): Միևնույն ժամանակ նշենք, որ հաշվետու տարում բանկերի քարտերով կատարվել է 30.9 մլրդ դրամի (աճը 126.1 % կամ 17.3 մլրդ դրամ) 498.6 հազ. անկանխիկ գործարք (աճը 94.2 % կամ 241.9 հազ. գործարք): Ինչպես երևում է վերը բերված տվյալներից, բանկային համակարգի քարտերով իրականացված ընդհանուր գործարքների ծավալում ArCa քարտերով կատարված գործարքների մասաբաժինը կազմել է 39.5 %-ը, Visa քարտերինը՝ 46.5 %-ը և Master քարտերինը՝ 14.0 %-ը:

«Հ բանկային համակարգի սպասարկման ցանցում հաշվետու տարվա ընթացքում կատարված ընդհանուր գործարքների ծավալը աճել է 93.5 %-ով կամ 88.0 մլրդ դրամով, իսկ քանակը՝ 59.3 %-ով կամ 1,373.7 հազ. գործարքով և տարեվերջին կազմել համապատասխանաբար 182.1 մլրդ դրամ և 3,689.7 հազ. գործարք, ընդ որում անկանխիկ գործարքների ծավալը կազմել է 23.1 մլրդ դրամ, քանակը՝ 429.4 հազ. գործարք, որը գերազանցում է նախորդ տարվա անկանխիկ գործարքների ծավալը 169.9 %-ով կամ 14.5 մլրդ դրամով և քանակը՝ 102.1%-ով կամ 216.9 հազ. գործարքով: Տեղին է նշել, որ հաշվետու տարում ընդհանուր գործարքների ծավալում 3.55 տոկոսային կետով աճել է անկանխիկ գործարքների տեսակարար կշիռը և այն կազմել է 12.69 %: Միաժամանակ ավելացնենք, որ բանկոմատներով կատարված գործարքների ծավալը աճել է 89.2 %-ով կամ 55.4 մլրդ դրամով, իսկ քանակը՝ 56.4 %-ով կամ 1,036.0 հազ. գործարքով և 2007 թ.-ի ընթացքում կատարվել է 117.4 մլրդ դրամի 2,874.3 հազ. գործարք, ընդ որում բանկոմատներով կատարված անկանխիկ գործարքների ծավալն ավելացել է 115.9 մլն դրամով կամ 37.2 %-ով, իսկ քանակը՝ 13.8 հազ. գործարքով կամ 28.9 %-ով: Ընդհանուր առմամբ հաշվետու տարվա ընթացքում բանկոմատներով կատարվել է 427.1 մլն դրամի 61.6 հազ. անկանխիկ գործարք:

Գործարքների ծավալի կառուցվածքը 2007 թ.-ին



Վերլուծությունը՝ Հայաստանի բանկերի միության